

04 AUG 2010

ՀՈՒՆ ՀՈՂ ՖՈՐՄԱՏ — ՀՈՅՈՀՈՏԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Գ. ԵՐԵՎԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԴԵՐԱՎԱՐԱԿ ԽՈԲՐՈՒ

ԻՆՉՊԵՍ ՊԵՅԶՋԱԾԵԼ
ԿԵՐՏՈՎԻԼԻ «ՓԱՇԵՆՄԱՆ ՔԱՆ»
ՀԻՎՈՆԴԱՐԻԹՅՈՒՆ ԴԵՐ

1. ՀՈՒՆ ԺԱՂԿԱՄԽԱՐՀԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
2. ՀՈՒՆ ՀԺԻ-Ի ԿԱՐԱՆՏԻՆՑԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՀՊՀ ՀՕ. 690.

632
h-61



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1935

632

հ-61

Մ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՈԽՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Կարտումիկ «Փուշենման բոս» հիվանդության
դեմ կարանի սահմանելու մասին

21-ին հոկտեմբերի, 1934 թ.

Դիլիջանի, Իջևանի և Ղարաքիլիսայի շրջան-
ների մի քանի զյուղերում կարտոֆիլի ցան-
քերի մեջ «փոշենման քոս» հիվանդություն
հայտաբերելու առնչությամբ, ու այդ հիվանդու-
թյան հետագա զարգացումն ու տարածումը կան-
խելու և նրա դեմ պայքար կազմակերպելու մի-
ջոցով հիվանդությունն իսպառ վերացնելու նպա-
տակով, անհրաժեշտ համարել՝

1. Կարանտին հայտաբերել փոշենման քոսով
վարակված Դիլիջանի, Իջևանի, Ղարաքիլիսայի
շրջաններում և վարակման տեսակետից կասկա-
ծելի՝ Մարտունու, Բայազետի, Շամշադինի և
Բայազետի շրջանները:

2. Արգելել վերոհիշյալ շրջաններից սերմացու
կարտոֆիլի արտահանումը:

3. Պարենային կարիքների համար կարանտին
հայտաբարված շրջաններից կարտոֆիլ արտա-

Պատ. խմբագիր՝ Ս. Խաչտորյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Սարյան

Թույատրված է. Դիլավիտի լիազոր № 627
Հանձնվել է արտադրության 1934 թ. դեկտեմբերի 25-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. հունվարի 2-ին
Հրատ. № 158 Տիրամ 2000 Պատվեր № 744

Յերևան. Գյուղհեռատի Տպարան, Նալբանդյան, № 50

հանել թույլ տալ ՀԺԿ-ի կարանտինային Տեսչության թույլավությամբ հատուկ վկայականով (սերտիֆիկատի):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ապրանք ստացող հիմնարկները և մասնավոր անձինք պարտագոր են այդ կարտոֆիլը պահել և ոգտագործել կարանտինային Տեսչության ցուցմունքների համաձայն:

4. Պարտագորացնել բոլոր պետական կազմակերպություններին ու հիմնարկներին անշեղորեն գեկավարվել ԽՍՀՄ ՀԺԿ-ի կողմից հաստատված ԽՍՀՄ-ի սահմաններում սերմացու և ապրանքային կարտոֆիլ փոխադրելու կարանտինային կանոններով: (ԽՍՀՄ ՀԺԿ 1933թ. 1-ն հոկտեմբերի № 512 վորոշումը):

5. Առաջարկել բոլոր կազմակերպություններին ըրջանից ըրջան կամ հանրապետության սահմաններից դուրս մերժացու և ապրանքային կարտոֆիլ արտահանելուց կամ ներմուծելուց առնվազն 10 որ առաջ կարանտինային Տեսչության ներկայացնել իրենց փոխադրումների պլանը՝ այդ հարցը Տեսչության հետ համաձայնեցնելու նպատակով:

6. Առաջարկել Հողժողկոմատին՝

ա) կարանտինային տեսչության միջոցով

մինչև 1934 թ. վերջը կարանտին հայտարարված ըրջաններում ճշտել փոշենման քոսով վարակված կետերի (գյուղերի) ցուցակը:

բ) Սերմատեչության և կարանտինային Տեսչության միջոցով առ 1-ն մարտի 1935թ. ստուգել կարտոֆիլի մշակությամբ զբաղվող մյուս ըրջանների պահեստներում յեղած սերմացու կարտոֆիլի վիճակը:

գ) Առ 1-ն հունվարի 1935 թ. մշակել և ներկայացնել ֆողկոմիսորներին ի հաստատություն վարակված ըրջաններում փոշենման քոս հիվանդության դեմ պայքարելու ձեռնարկումների և այդ հիվանդությունը վերացնելու պլանը (կարանտինային ցանքաշրջանառություն, սերմացու կարտոֆիլի ախտահանում և այլն):

դ) Հինգ որվա ընթացքում ըրջաններն ուղարկել մանրամասն՝ հրահանգ՝ փոշենման քոսով վարակված ըրջաններում կարտոֆիլը պահելու ձեի և ոգտագործելու մասին:

ե) Կարանտինային կանոնների կիրառման պառակումը դնել. Կարանտինային Տեսչության վրա: Զգուշացնել բոլոր ըրջործկոմների նախագահներին և հողբաժաններին, վոր Կարանտինային Տեսչության հետ միասին նրանք ևս պատասխանատու յեն այս վորոշումը կյանքում կիրառելու և ի կատար ածելու համար:

զ) Այս վորոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածները խախտող անձինք պատասխանատվության են յենթարկվում վարչական կազմով տուգանքի մինչև 500 ռուբլի, կամ հարկադիր աշխատանքի մինչև 2 ամիս ժամանակով:

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՆ

Ա. Տ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գործերի Կառավարիչ

ԹՌՔՄԱԶՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՐՏԱՖԻԼԻ «ՓՈՇԵՆՄԱՆ ՔԱԱ» ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
ԳԵՐ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ-ի մի քանի շրջաններում 1934 թ. հայտաբերված ե կարտոֆիլի փոշենման քոս վտանգավոր հիվանդությունը: Այս հիվանդության գեմ կազմակերպված ձեռվ պայքարելու միջոցները պետք ե ընթանան յերկու ուղղությամբ—մի կողմից պետք ե կազմակերպել պայքար փոշենման քոսով վարակված շրջաններում հիշյալ հիվանդությունը վերացնելու, և մյուս կողմից խիստ կարանտին կազմակերպելու միջոցով թույլ չտալ, զոր վարակն անցնի այլ շրջանները:

1. Ինչ վճարեն ե հասցեում «փոշենման հոսք» Այս հիվանդության պատճառած հիմնական վնասները հետեւալն են.

Կարտոֆիլի հիվանդ պալարները ծածկվում են խոցերով, վորոնք թափանցելով պալարի խորքն առաջացնում են խոր բացվածքներ, վորի համար ել այդ կարտոֆիլը, վորպես կեր ոգտագործելու զգալի շափով անպետք ե համարվում:

Փոշենման քոսով հիվանդ պալարների մակերեսի խոցերը նպաստում են պալարի շուտափությանը, վարի հետևանքով պահելու ժամանակ կարտոֆիլը շատ հեշտ է փոռում ու վոճռչանում:

Հիվանդ պալարներից առաջացած ընձյուղները կամ բոլորովին չեն զարգանում, կամ զարգանումն ընթանում է չափազանց թույլ, վորպիսի յերեւյթն ուժեղ կերպով նվազեցնում է թերքը: Բացի այդ, զարակիած կարտոֆիլ ցանելու դեպքում, զարակիվում, զարակիվում ենակ հողը, վորի մեջ զարակն իր զոյությունը պահպանում է 3—5 տարի և այդ ժամանակաշրջանում առաջ կարտոֆիլ ցանելու դեպքում անգամ նույնպես կարակիվ:

2. Հիվանդության արտաքին նշանները կարտոֆիլի պալարի վրա

Փոշենման քոր շարունակում է իր զարգութը զարակիած պալարների վրա նաև կարտոֆիլը քանդելուց հետո, նրա պահելու ժամանակ: Այդ հիվանդության բնորոշ նշանները հետևյալն են. պալարի մակերեսի վրա գոյանում են փոքրիկ ուռուցքներ, վորոնք հիվանդության զարգացման ընթացքում սկսնում, չորանում և ձաքճքում են, գրանից հետո մաշկի յեղբերն ստանում են անհավասար աստղանման ձև: Այս

պիսով պալարի մակերեսի վրա գոյանում են այդ հիվանդության համար բնորոշ յեղող փոսիկներ, խոցեր և աստղաձև պատովածքներ:

, Այդ խոցերի տակ ծածկված են լինում մնկի դարձնագույն սպորներով: հաճախ առանձին խոցիկները ձուլվում են կազմում են խոր, լայն բացվածքով փոսիկներ:

3. Ինչպես պայմանի վուենման հոսի վեմ

Հիմնականութ վոշենման քոսի դեմ պայքարելու միջոցները հետևյալն են.

1. Ազրուելինիկան միջոցներ.

ա) խոր ցրտահերկ, զարնան կրկնահերկ կատարելու պայմանով:

բ) պտղափոխությունն այն պայմանով վրը կարտոֆիլն իր նախկին տեղում ցանվի 3—5 տարուց վոչ շուտ:

շ) այն կոլանտեսություններում, ուր գոյություն ունի զանքաշրջանառություն, կամ վորտեղ պետք են ցանքաշրջանառություն տարվի, կարտոֆիլը պետք են ցանել իր նախկին տեղում՝ 3—6 տարուց վոչ շուտ:

դ) խննավ տեղերում մշակվող կարտոֆիլը պետք երեսաժի յենթարկել (կատարել մելիորատիվ աշխատանք) խոր ակոս քաշելով միջա-

պավենային տարածության մեջ և տնկել ժա-
պավենի ձևով:

2. Հիվանդ, վարակված սերմացուն փոխա-
րինել առողջ սերմացվով: Յեթե հարավոր չե-
վարակված սերմացուն փոխարինել առողջով,
այս գեղքում վարակված պալարների միջից
խիստ ընտրություն կատարել՝ իսկ մնացածն
ախտահաճանել ֆորմալինով (հրահանգը
տես ներքեւում):

Կատեգորիկ կերպով արգելվում ե տուանց
ախտահաճան վարակված կարտոֆիլ ցանել:

Պետք ե իմանալ և հիշել, վոր փոշենման
քոսը խիստ վարակիչ հիվանդություն ե, ուստի
առողջ սերմացուն պետք պահել անպատճառ
հատուկ պահեստներում, վարակված սերմաց-
վից առանձին: Վարակված կարտոֆիլը պահեստ-
ներից (սերմացու կամ ապրանքային) դուրս
հետո, պահեստներն անպայման ե ան-
միջապես պետք ե ախտահաճանել ֆորմալինի լու-
ծույթով (մեկ մաս ֆորմալին 200 մաս ջուր):

Ախտահաճանել նաև փոխադրական միջոցները
և այն տարաները, վորով վարակված կարտոֆիլ
են փոխադրել կամ պահել:

ՀՍԽՀ Ժողկոմիորհի ս/թ. 21.ն հոկտեմբերի
վորոշաման համաձայն փոշենման քոսի տարած-

ման գեմ կարանտինային բնույթ ունեցող մի-
ջոցները հետեւյալն են.—

1. Արգելվում ե սերմացու կարտոֆիլ փո-
խադրել փոշենման քոսով վարակված և կարան-
տին հայտարարված շրջանների առհմաններից
դուրս:

2. Սերմացու կարտոֆիլի բոլոր պարտիա-
ները պետք ե ունենան ՀԺԿ-ի կարանտինային
Տեսչությունից համապատասխան վկայականներ
վարակված լինելուց զերծ լինելու մասին և մի-
այն այդ գեղքում թույլատրել այլ շրջան փո-
խադրել:

3. Վարակված շրջաններից ուտելու համար
կարտոֆիլ արտահանելու համար կարանտինային
Տեսչությունից նույնպես պետք ե ունենալ հա-
մապատասխան թույլտվություն:

4. Ինչպես ոգտագործել յեվ պահել վարակված
կարտոֆիլը

Վարակված կարտոֆիլն ուտելու համար
ոգտագործել առաջին հերթին, վորովհետեւ պա-
հելու գեղքում նա կարող ե արագ թափով
փշանալ: Վարակված կարտոֆիլը տավարին փոր-
պես կեր տալու գեղքում անհրաժեշտ ե յեռաց-
նել ջրի մեջ:

Այն գեղքում, յերբ վարակված կարտոֆիլը

վորպես սորտային կարտոֆիլ արժեքավոր է,
կամ թե առկավության պատճառով հնարավոր
չե փոխարինել ուրիշ առողջ սերմացուրով և
անհրաժեշտ ելինում պահել, մինչև տեղափորելը
պետք եւ փոշենման քննով հիվանդ պալարների
խիստ ընթրություն կատարել: Չմեռը պահելու
ընթացքում մի քանի անգամ անհրաժեշտ ե
առուգել կարտոֆիլը և անջատել առողջներից
հիվանդ պալարները: Կարտոֆիլը պահելու մյուս
պայմանները չեն տարբերվում առողջ սերմացու
պահելու պայմաններից:

5. Ենչպիս ախտահանել փուչենման եռունի^թ գարակված պալարները

1. Կարտոֆիլի պալարներն ախտահանելու
համար զործագրվում ե ֆորմալինի սովորական
լուծույթի 0,13 տոկոսը: Ալդալիսի յուծույթ
ստանալու համար վերցնել մեկ մաս 40% ֆոր-
մալին և դրան ավելացնել 300 մաս ջուր:

2. Պալարները կուրտ-կուրյա հինգ րոպե
գնել ֆորմալինի լուծույթի մեջ, վորից հետո ըրե-
ղենափետուկ յերկու ժամ շարունակ տամկացնել
(տօմլենից): Փորմալինի գոլորշու մեջ:

Ծլած պալարները 5 րոպեից ավելի չթողնել
լուծույթի մեջ, վորպեսզի չվնասվին մատադ
ծիլերը: Բըեզենափետուկ տակ տամկացումը կատա-

րելուց հետո ախտահանված պալարները փոել
գետնին՝ չորացնելու համար: Կարտոֆիլը անկել
առանց ջրի մեջ լվանալու:

3. Ախտահանման պրոցեսի ամբողջ ընթաց-
քում ֆորմալինի լուծույթի խտությունը չի
նվազում և լուծույթը մինչև նրա լրիվ սպառումը
չի կորցնում իր ակտիվությունը:

4. Ախտահանելու համար ոգտագործել
տակառները:

5. Փոշենման քոսով վարակված և անկելու
համար հատկացված կարտոֆիլը կարելի յե
ախտահանել տչնանից, այսինքն՝ մինչև պահեստ
տեղափոխելը: Ախտահանված, լավ չորացրած
կարտոֆիլն անպայման պահել կերի և սնունդի
համար հատկացված կարտոֆիլից բոլորովին
առանձին:

6. Կարտոֆիլ պահելու ժամանակ (մինչև
պարկերում լցնելը) և պահեստներ տեղափոխելը),
անհրաժեշտ ե ֆորմալինի լուծույթով լվանալ
ամբողջ տարան և պահեստը: 1600 կիլոգրամ
(100 փութ) ախտահանելու համար ծախսվում է
300 լիտր ջուր և մի լիտր ֆորմալին:

6. Քորմալինի հատկությունները յեզ պնդան-
գուրյան կանոնները

1. Ֆորմալինն անգույն հեղուկ եւ ուսնի
ուժեղ կծու հոտ։ Սովորական ջերմաստիճանի
տակ հեշտությամբ գոլորշիանում եւ։

2. Ֆորմալինը սառ տեղ պահելու դեպքում
դառնում եւ ջրի մեջ չլուծվող սպիտակ, բամ-
բականման (փաթիլանման) մասսա։ Յեթե ֆոր-
մալինի մեջ առաջ են յեկել պղտոր—սպիտակ
փաթիլներ, այդ փաթիլները լուծելիւ համար
ֆորմալինը պետք եւ տաքացնել շատ թեթև,
դանդաղ կրակի վրա։

3. Ֆորմալինի մեջ ախատհանված կարտո-
ֆիլի պալարները չի կարելի ոգտագործել վորպես
սնունդ մարդու համար, կամ վորպես կեր տավա-
րի համար, վօրովհետև ախտահանելուց հետո
կարտոֆիլը թունավոր հատկություններ եւ ստա-
նում։

4. Ֆորմալինի գոլորշիներն ուժեղ կերպով
զրգում են աչքերի և քթի թաղանթները։ Այդ
ցավերը (գրգիռները) վոչ մի վնասակար հետե-
վանք չեն ունենում և ցավեր առաջ բերելու
պատճառները վերացնելուց հետո շատ շուտ վե-
րանում են։

5. Այս անոթները, վորտեղ պատրաստել են

ֆորմալինի լուծույթը, կամ կատարել են ախտա-
հանում, տաք ջրով և սապոնով խնամքով լվա-
նալուց ու այսուհետև ողափոխության յենթար-
կելուց հետո, կարելի յեւ ոգտագործել անտեսա-
կան այլ կարիքների համար։



ՀՀ Ազգային գրադարան



NL0288564

17666

2 р б



ИНСТРУКЦИЯ

По проведению мероприятий против болезни
картофеля „порошистой парши“

Сельхозгиз

1935

Эривань